



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Լիպարիտ Սիմոնյանի, Կարեն Մեժլումյանի, Հարություն Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի, Նելլի Հարությունյանի, Սիմոն Բաբայանի և Տիգրան Խուրշուդյանի,

քննության առնելով Պալատի որակավորման հանձնաժողով կազմավորելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Պալատի խորհրդի 28.02.2014 թվականի թիվ 6/1-Ա որոշմամբ մինչև 01.03.2016 թվականը կազմավորվել է Պալատի որակավորման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) **Արա Զոհրաբյան**, ի.գ.թ., Պալատի որակավորման հանձնաժողովի նախագահ,

2) **Հունան Տեր-Վարդանյան**, ի.գ.թ., փաստաբան,

3) **Արսեն Սարգսյան**, ի.գ.թ., փաստաբան,

4) **Մանե Կարապետյան**, ի.գ.թ., փաստաբան,

5) **Սեդրակ Ասատրյան**, փաստաբան,

6) **Արման Թաթոյան**, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ. ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ,

7) **Գառնիկ Սաֆարյան**, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող,

8) **Ելիզավետա Դանիելյան**, ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ **փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված ժամկետով՝ ութ անդամի կազմով, ներկայացուցչության հետևյալ**

14 մարտի 2016թ.

թիվ 08/1-Ա

համամասնությամբ՝

1) **փաստաբանների պալատի նախագահը, որն ի պաշտոնե որակավորման հանձնաժողովի նախագահն է, և փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված չորս անդամ.**

2) **Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից մեկ ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի ներկայացմամբ.**

3) **Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայից մեկ գիտնական իրավաբան՝ այդ հաստատության ղեկավարի ներկայացմամբ.**

4) **Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանից (այսուհետ՝ վճռաբեկ դատարան) մեկ դատավոր՝ վճռաբեկ դատարանի նախագահի ներկայացմամբ:**

Պալատի կանոնադրության 18.2 կետի համաձայն՝ **փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ երկու տարի ժամկետով..:**

Ելնելով վերոգրյալից,

նկատի ունենալով այն հանգամանքը, որ Պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվել է 28.02.2014թ.՝ երկու տարի ժամկետով, մինչև 01.03.2016 թվականը,

հաշվի առնելով Պալատի կանոնադրության 18.4 ենթակետի պահանջի հաշվառմամբ Պալատի նախագահի կողմից որպես որակավորման հանձնաժողովի անդամներ՝ փաստաբաններ Հունան Տեր-Վարդանյանի, Քրիստինա Սարգսյանի, Մանե Կարապետյանի և Սեդրակ Ասատրյանի թեկնածությունների առաջադրման հանգամանքը,

հիմք ընդունելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից և ՀՀ վճռաբեկ դատարանից ստացված գրությունները,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 5-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5 (4), 18.2, 18.4 կետի պահանջներով, միաձայն՝

Ո Ր Ո Շ Ե Ց ՝

1. Կազմավորել Պալատի որակավորման հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- 1) **Արա Ջոհրաբյան**, ի.գ.թ., Պալատի որակավորման հանձնաժողովի նախագահ,
- 2) **Հունան Տեր-Վարդանյան**, ի.գ.թ., փաստաբան,
- 3) **Քրիստինա Սարգսյան**, ի.գ.թ., փաստաբան,
- 4) **Մանե Կարապետյան**, ի.գ.թ., փաստաբան,
- 5) **Սեդրակ Ասատրյան**, փաստաբան,
- 6) **Գառնիկ Սաֆարյան**, ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչ, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող,
- 7) **Ելիզավետա Դանիելյան**, ՀՀ վճռաբեկ դատարանի ներկայացուցիչ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր,

8) **Դավիթ Մելքոնյան**, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:
(կետր փոփոխվել է [ՀՀ ՓՊ խորհրդի 01.04.2016թ. թիվ 09/15-Ա որոշմամբ](#))

2. **Սահմանել, որ Պալատի որակավորման հանձնաժողովը կազմավորվում է երկու փարի ժամկետով՝ մինչև 2018 թվականի մարտի 14-ը:**

3. **Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել Պալատի որակավորման հանձնաժողովի նորընտիր անդամներին, ինչպես նաև սույն որոշումը հրապարակել Պալատի կայքէջում:**

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

14 մարտի 2016թ.
թիվ 08/1-Ա
ք. Երևան